յայտնող չկայ, երբ մեր անսահման չարչարանքներին և անվերջ զրկանքների մասին ձայն ու աղաղակ բարձրացնող չկայ։ Բայց եթէ այդպիսի անվեհեր և քաջ մարդ պատահի մեր գիւղերում, նա իսկոյն կատաղի Թուրքերի հրաշէկ գնդակներին զոհ կդառնայ։

—Ա՜յ, քո սպառնալիքդ թէև Թուրքերին վախ պատճառեց, բայց իմացած եղիր, որ այդ բանը մեզ վրայ շատ Թանգ պիտի նստի։—Ո՛չ մի բան չի լինի, մայրիկ, ասացի ես. Թուրքերի յանդուգն ոտնձգութիւնները պէտք է սանձահարեմի կերպ, ապա թէ ոչ նրանց անվերջ պահանջները կատարել անկարելի է։—«Ա՜խ, որդեակ իմ, դու երեխայ ժամանակից հեռացած լինելով, մոռացել ես շատ բան, Թուրքերը վրէժխնդիր ու ոխակալ են, երբևիցէ իրենց վրէժը կլուծեն մեզանից»։ Անցան մի երկու տարի, արդարև միշտ տխուր լուրեր և ուշագրաւ նամակներ էի ստանում հայրենի աշխարհի դժբախտ գիւղերից. թէ Թուրք բէկերը քանդում են մեր տները, այլ ևս վարելու, ցանելու, հնձելու և ապրելու ոչ մի հնար չունինք, կամ ձեռքի տակից օգնիր մեզ, որ կարողանանք ապրել մի կերպ, կամ որևէ տեղ, մանաւոր կալուածքում ազատ հող գտիր, որ մենք՝ Հայերս գաղթենք և ազատուենք այս անկուշտ գայլերի սուր-սուր ժանիքներից...։ 1900 թ. երբ զաւակներիս հետ մեր գիւղումն էի։ Մի օրից յետոյ տեսնեմ, որ մի այլակերպ պառաւ Թուրք կին ամեն օր մտնում է մեր տուն, ուտում-խըմում է և ապա 30—40 կոպէկ էլ «դիշքիրասին»